ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴԱՇԻՆՔ՝ ՎՐԱՑԱԿԱՆ «ՋՈՐՋԻԱ ԷՅԵՐՎԵՍ» ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՐՄԱՎԻԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Անցյալ տարվա վերջերին վրացական «Ջորջիա էյերվեյս» ընկերության նախագահ Թոմազ Գալաշվիլին հանդիպում է ունեցել Հայաստանի ավիացիայի վարչության պետ Արտյոմ Մովսիսյանի հետ: Հանդիպմանը քննարկվել է «Ջորջիա էյերվեյս» եւ «Արմավիա» ընկերությունների միջեւ դաշինքի կնքման հարցը: Մեկնաբանության համար վերոնշյալ հարցով դիմեցինք ԹՈՄԱԶ ԳԱԼԱՇՎԻԼՈՒՆ:

- Այո, մենք «Արմավիա» ընկերության հետ ձեւավորում ենք դաշինք: Դա ընդունված տարբերակ է աշխարհում, եւ նշանակում է, որ երկու երկրների ավիափոխադրողներն իրար աջակցելու են, ինչպես նաեւ իրականացնելու ենք փոխադարձ ավիափոխադրումներ:

Հանդիպում եմ ունեցել «Արմավիայի» նախագահ Միխայիլ Բաղդասարովի, «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Խուան Պաբլո Գեչիջյանի եւ ՀՀ ավիացիայի վարչության պետ Արտյոմ Մովսիսյանի հետ: Ադյունքում՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ վրացական ավիաընկերությունը թռիչքներ է իրականացնելու Թբիլիսի-Երեւան ուղղությամբ:

Հայաստանը մեզ համար տրանզիտային երկիր է, եւ այստեղից տրանզիտ կերպով մեր ուղեւորներին կտեղափոխենք աշխարհի տարբեր կետեր: Թբիլիսիից Երեւան չվերթը կտեւի 25 րոպե: Այս չվերթը հարմար է ոչ միայն տարանցիկ, այլեւ բիզնես ուղեւորների համար, քանի որ կարճ ժամանակում կարելի է հասնել Երեւանից Թբիլիսի եւ հակառակը:

- Կոնկրետ ի՞նչ ուղղություններով եք աշխատելու:

- Օրինակ, ՌԴ ուղղությամբ կզարգացնենք մեր տրանզիտ փոխադրումները դեպի Միջին Արեւելք, կիրականացնենք համատեղ չվերթեր: Իհարկե, մեծ մասամբ այս դաշինքը մեզ համար կարեւորվում է դեպի Ռուսաստան ավիափոխադրումների առումով, քանի որ ներկայումս, ինչպես գիտեք, Վրաստանից այդ ուղղությունը չի գործում: Փաստորեն, Վրաստանի ուղեւորների 80 տոկոսը (Ռուսաստան ուղեւորվող) Երեւանով է մեկնում:

«Արմավիա» ընկերությունը ստեղծում է բոլոր հնարավորությունները՝ ապահովելու հարմարավետ թռիչք: «Զվարթնոց» օդանավակայանի տնօրինությունը նույնպես խոստացավ անել ամեն հնարավորը՝ ապահովելու ուղեւորների հարմարավետությունը:

- Հանդիպման ընթացքում առաջացե՞լ են խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն:

- Ո՛չ, խնդիրներ չկան, եւ կարելի է ասել, որ կողմերն իրենց աշխատանքները կատարել են, այժմ աշխատանքային խմբերը պետք է աշխատեն լուծել տեխնիկական հարցերը: Պետք է ընդգծեմ, որ մեզ համար շատ կարեւոր եւ ուրախալի է այն փաստը, որ «Արմավիայի» նախագահն անմիջապես ըմբռնում է խնդիրները, եւ ոչ մի խոչընդոտ չկա: Ընդգծեմ նաեւ, որ դժվարություններ չի ստեղծել մեզ համար ո՛չ Հայաստանի ավիացիայի վարչությունը եւ ո՛չ էլ «Զվարթնոց» օդանավակայանի ղեկավարությունը:

- Ըստ որոշ խոսակցությունների, ձեր եւ «Արմավիա» ընկերությունների միջեւ դաշինքի կնքումը օրերի՞ հարց է:

- Ակնկալում ենք դաշինքը կնքել մինչեւ տարեվերջ:

- «Ջորջիա էյերվեսը» միա՞կ ավիափոխադրողն է Վրաստանում, ի՞նչ ծավալի ուղեւորափոխադրում է տարեկան իրականացնում:

- Տարեկան փոխադրում ենք կես միլիոն ուղեւոր: Մեր ընկերությունն աշխատում է 1994-ից, սկզբում փոքր ընկերություն էր, որն իրականացնում էր չարտերային թռիչքներ եւ, 1999 թվականից սկսած, վերածվել է ազգային ավիափոխադրողի, որն իրականացնում է ամենաշատ ուղեւորափոխադրումներ: Ընկերությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին եւ տարեցտարի զարգացում է ապրում:

- Դաշինքը կնքելուց հետո, քանի՞ ուղեւոր եք նախատեսում տեղափոխել Երեւանով:

- Երբ իրականացնում էինք թռիչքներ ՌԴ ուղղությամբ, ուղեւորափոխադրումն ընդհանուրի մեջ կազմում էր ավելի քան 40 տոկոս: Այնպես որ, կարծում եմ, այդ ուղղությամբ ուղեւորափոխադրումների 30 տոկոսը կիրականացնենք Երեւանով:

- Բնականաբար, մինչ այդ գործարքը իրականացրել եք շուկայի ուսումնասիրություն: Ինչպիսի՞ն է Հայաստանի ավիացիոն շուկան, եւ ինչո՞ւ չընտրեցիք մեկ այլ արեւմտյան ընկերություն (Հայաստանում գործող) դաշինք կնքելու համար:

- Իհարկե, իրականացրել ենք ինչպես Հայաստանի ավիացիոն շուկայի ուսումնասիրություն, այնպես էլ դիտարկել ենք «Արմավիա» ընկերության հնարավորությունները: Ինչ խոսք, Հայաստանի ավիացիոն շուկայում արեւմտյան ավիաընկերությունները դոմինանտ տեղ են գրավում, եւ նրանց տրված է ավելի շատ ուղեւոր տեղափոխելու բոլոր հնարավորությունները:

Պետք է նշեմ, որ այս դաշինքի ստեղծումը ներկայումս դիտարկվող շուկայի մրցակցության անհավասար պայմանները կբերի ինչ-որ հավասարակշռության: Ինչ վերաբերում է ընկերության ընտրության հարցին, ապա դա պայմանավորված է հետեւյալով. նախ՝ մեր ազգերի մտածողությունը գրեթե նույնն է, ունենք պատմականորեն միահյուսված արմատներ, եւ հայերին ու վրացիներին հեշտ է իրար հետ աշխատել: Արեւմտյան երկրները (ինչպես առաջներում էին ասում) չեն սիրում կիսվել, իսկ մեր ազգերը միշտ կարողացել են ընդհանուր լեզու գտնել:

Ուսումնասիրելով «Արմավիայի» հնարավորությունները՝ մեզ պարզ դարձավ, որ ընկերությունը երիտասարդ է, զարգացող, համապատասխանում է միջազգային չափանիշներին, եւ մեծ ուշադրություն է դարձվում անվտանգության պահանջների կատարելագործմանն ու ավիապարկի արդիականացմանը: Այս գործոններով է պայմանավորված մեր ընտրությունը:

ՎՐԵԺ ԱՀԱՐՈՆՅԱՆ

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



Քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության համար կազմավորվել է սոցիալական գործընկերության եռակողմ հանձնաժողով, որը խորհրդատվական մարմին է եւ հաշվետու՝ եռակողմ հանձնաժողովի նախագահ Վրաստանի վարչապետի առջեւ: Իր գործառույթների իրականացման նպատակով սահմանված իրավասությունների շրջանակներում, հանձնաժողովը լիազորված է, օրենսդրությամբ սահմանված կարգով, քննարկել կողմերի առաջադրած հարցերը, հանձնաժողովի նիստում լսել կողմերի տեղեկատվությունը վերջիններիս իրավասության հարցերի վերաբերյալ, օրենքով սահմանված կարգով, պահանջել գործադիր իշխանությունից եւ համապատասխան տեղեկանք՝ ինքնակառավարման մարմիններից ու այլ հաստատություններից եռակողմ հանձնաժողովում քննարկվող հարցերի մասին անհրաժեշտ նյութեր: Օրենսդրությամբ սահմանված կարգով, համապատասխան առաջարկությունների եւ հանձնարարականների մշակման նպատակով, հրավիրել տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների, ոլորտի մասնագետների ու փորձագետների, որի ժամանակ պետք է բացառվի շահերի դիմակայությունը: Իր իրավասությունների շրջանակներում, մշակել եւ շահագրգռված անձանց ներկայացնել համապատասխան առաջարկությունները:

Սոցիալական գործընկերության եռակողմ հանձնաժողովը իր գործունեությունում առաջնորդվում է Վրաստանի սահմանադրությամբ, Վրաստանի միջազգային պայմանագրերով, երկրի օրենքներով եւ կարգադրություններով, վարչապետի հրամանագրերով, սոցիալական գործընկերության եռակողմ հանձնաժողովի կանոնադրությամբ, իրավական այլ ակտերով:

Հարց.- *Գուցե պարզաբանեք՝ տվյալ պարագայում ի՞նչ է նշանակում «սոցիալական գործընկերություն» արտահայտությունը:*

Պատասխան.- «Սոցիալական գործընկերություն» արտահայտությունը տվյալ պարագայում նախատեսում է գործատուի (գործատուների միավորման), աշխատողի (աշխատողների միավորում) եւ պետական գերատեսչության ներկայացուցչի միջեւ երկխոսության ու հարաբերության համակարգ՝ կապված աշխատանքային հարցերի հետ:

Եռակողմ հանձնաժողովի կողմերն են Վրաստանի կառավարությունը եւ երկրի մասշտաբով տարբեր ոլորտներում գործող աշխատողներն ու գործատուները: Յուրաքանչյուր կողմ եռակողմ հանձնաժողովում ունի վեց անդամ, ովքեր կարող են ներկայացնել տարբեր կազմակերպություններ: Այդ կազմակերպությունների ներկայացուցիչներին եռակողմ հանձնաժողովի կազմում ներառման վերաբերյալ որոշումն ընդունում է եռակողմ հանձնաժողովի նախագահը:

Հատկանշական է, որ գործատուների եւ աշխատողների յուրաքանչյուր միավորում, որը եռակողմ հանձնաժողովի մասնակից է, ինքնուրույն է որոշում եռակողմ հանձնաժողովում ներկայացվելիք ներկայացուցչի հարցը: Եռակողմ հանձնաժողովի անդամ կարող են ներկայացվել կողմերին ներկայացուցիչների իրավասությունն ունեցող անձինք, ովքեր իրենց կողմից եռակողմ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու են հանձնաժողովի մյուս հնգական անդամներին:

Եռակողմ հանձնաժողովում Վրաստանի կառավարությունը, նախագահի հետ միասին, ներկայացվում է պետական հետեւյալ հաստատությունների՝ Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ ոցիալական պաշտպանության նախարարության, արդարադատության նախարարության, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության, տարածաշրջանային զարգացման ու ենթակառույցների նախարարության եւ կրթության ու գիտության նախարարության ղեկավար անձանց կողմից: Հանձնաժողովի նիստերում քննարկվում է առաջիկա տարիների գործունեության ռազմավարությունը, որը ներառում է աշխատանքային օրենսգիրքը, աշխատանքի տեսչությունը, աշխատանքային լրատվությունը, կենսաթոշակային քաղաքականությունը, նվազագույն աշխատավարձի չափը, կրթության եւ ներդրումային քաղաքականության հարցերը, ինչպես նաեւ սոցիալական պարտիայի առանձին հոդվածների վավերացումն ու 144-րդ հռչակագրի վավերացման հետ կապված հարցերը, որոնք ծառայում են կառավարության, գործատուների եւ աշխատողների համագործակցության սկզբունքներին: Ինչպես պարզաբանեց Վրաստանի աշխատանքի, առողջապաության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն, եռակողմ հանձնաժողովն այն կարեւոր կառույցն է, որը սահմանում է աշխատանքի հետ կապված հիմնական քաղաքականությունը, այն քննարկում է ինչպես աշխատանքային վեճերը, այնպես էլ՝ աշխատանքային լրատվությունը, միջազգային հռչակագրերի վավերացման հարցերը: (http://www.interpressnews.ge կայք-էջ):

ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻ
Իրավաբան

(Շարունակելի)

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

TBC ԲԱՆԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

TBC բանկը, TBC պատկերասրահում, լրատվամիջոցների եւ հասարակության ներկայացուցիչներին ներկայացրեց իրականացված CSR նախագծերի հաշվետվությունը: Կորպորացիոն սոցիալական պատասխանատվությունը TBC բանկի համար առաջնահերթային ուղղություն է: CSR ներդրումների եւ քաղաքականության տեսանկյունից, TBC բանկը հավասարվում է այնպիսի միջազգային բանկերի պրակտիկային, ինչպիսիք են Barclays, HSBC, Deutche Bank եւ այլն:



Կորպորացիոն սոցիալական պատասխանատվությունը նախատեսում է դրական ազդեցությունը այնպիսի ոլորտներում, որոնք հասարակության համար հրատապ են ու հետաքրքիր: Այդ առումով, TBC բանկի կողմից հավանության արժանացած նախագծերը բազմերանգ են՝ բիզնեսի զարգացում եւ աջակցություն, շնորհալի երիտասարդների կրթություն ու մասնագիտական կրթություն, մշակույթ, արվեստ, սոցիալապես հրատապ թեմաներ, ռեբգբիի ժողովրդականացում եւ այլն:

Վրաց բիզնես հատվածի համար նորույթ է նաեւ այն, որ մասնավոր ընկերությունը հասարակայնությանը հաշվետվություն ներկայացրեց սոցիալական պատասխանատվության հովանու ներքո իրականացված նախագծերի մասին: Ինչպես հայտարարեց TBC բանկի դիտորդական խորհրդի նախագահ Մամուկա Խազարաձեն, TBC բանկը պարբերաբար հասարակայնությանը կներկայացնի նման հաշվետվություն, որպեսզի ապահովի գործընթացի թափանցիկությունը:

Հաշվետվության շնորհանդեսին ներկա հասարակայնությանը տրվեց հնարավորություն՝ դիտելու տեսահոլովակը, որտեղ ներառված էին բոլոր այն նշանակալի նախաձեռնությունները, որոնք 2015-2016 թվականներին իրականացվել են TBC բանկի աջակցությամբ: Իրականացված նախագծերը միավորվեցին TBC բանկի համար առաջնահերթային չորս ուղղություններում՝ բիզնեսի աջակցություն, նոր սերունդ, մշակույթ եւ ռեգբի:

TBC բանկն աչքի է ընկնում նաեւ աշխատակիցներին ուղղված սոցիալական նախագծերով. մասնագիտական զարգացման ծրագրեր, որոնք նախատեսում են ուսուցում արտասահմանում, TBC բանկի ակադեմիայում, «TBC-ներին» հիմնադրամի բազմազավակ ընտանիքներին ֆինանսական աջակցություն եւ այլն:

TBC բանկը առաջիկայում էլ կշարունակի սոցիալական պատասխանատվության շրջանակներում նախագծերի աջակցություն: 2017 թվականին կրկին շեշտը կդրվի բիզնեսի աջակցությանը, նոր սերնդին, մշակույթին եւ ռեգբիին:

2015-2016 թվականներին TBC բանկի աջակցությամբ իրականացված նախագծերի թվում են բիզնեսի աջակցության ծրագիրը (այն նախատեսում էր բիզնեսով զբաղված մարդկանց անվճար վարժանքներ ու խորհրդատվությունները), բիզնեսի ոլորտում ամենամասշտաբային «Բիզնես պարգեւատրում-2016» ծրագրի նախագիծը, որին մասնակցեց ավելի քան 500 ընկերություն եւ այլն:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❁ ԱՅԼԱՋԱՆ ❁ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆԸ



Ասում են՝ ընտանեկան երջանկության եւ հաջողության հիմնահիմքը կինն է ու նրա վերաբերմունքը: Ես կին եմ, սակայն ոչ լրիվությամբ եմ հասկանում այդ խոսքերի իմաստը: Գուցե պարզաբանե՞ք:

Մ.Խ.

Թբիլիսի

Երբ կինն իր կյանքից հաճույք է ստանում եւ իրեն երջանիկ զգում, նրա կողքի տղամարդու առջեւ սկսվում են բացվել բոլոր դռները, եւ հաջողությունը նրա ուղեկիցն է դառնում: Դրա պատճառն այն է, որ ներքին բավարարվածության եւ երջանկության վիճակում կինն իր ստեղծագործական մտքի ուժով օրհնում է ամուսնուն, եւ նրա կյանքին հաջողություն է բերում: Կնոջ միջոցով տղամարդը ձգում է կա'մ հաջողության, կա'մ էլ կործանման տանող էներգիաների հոսքերը, քանի որ կինը սերտորեն կապված է նուրբ ոլորտների, էներգիայի աշխարհի հետ: Եթե կինը բավարարված չէ իր ընտանեկան կյանքով, գոհ չէ իր ամուսնուց, ապա վերջինիս համար հաջողության հասնելը դժվարանում է: Ահա թե ինչու, իմաստուն տղամարդիկ միջոցներ չեն խնայում իրենց կանանց նվերներ գնելու համար, ահա թե ինչու են նրանք փորձում իրենց կանանց հեռու պահել ցանկացած տհաճ աշխատանքից եւ շրջապատել միայն հաճելի տպավորություններով: Նրանք բնազդաբար զգում են, որ երջանիկ կինը ողջ ընտանիքի հաջողության գրավականն է:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՏՐՈՆԻ ԿԵՂԵՎԸ՝ ՀՈԴԱՑԱՎԵՐԻ ԴԵՄ

Կիտրոնը հայտնի է իր օգտակար հատկանիշներով: Ամենայն հավանականությամբ լսել եք, որ առավոտյան կանոնավոր կերպով կիտրոնով ջուր խմելը չափազանց օգտակար է:



Այս դեղին ցիտրուսը համարվում է ամենահին բույսերից մեկը, որը մշակվել է մարդկության կողմից, եւ դրա օգտակար հատկանիշներն իսկապես հիրաշքներ են գործել մարդու առողջության հարցում:

Կիտրոնը հարուստ է վիտամիններով եւ հանքանյութերով, օրինակ՝ վիտամին C, A, B1, B6, մագնեզիում, կենսաֆլավոնոիդներ, պեկտին, ֆոլաթթու, ֆոսֆոր, կալցիում եւ կալիում: Այս բոլոր ակտիվ բաղադրիչները կենտրոնացած են մեկ ցիտրուսի մեջ, դրանք պաշտպանում են մարդու օրգանիզմը տարատեսակ հիվանդություններից եւ առողջական խնդիրներից: Կիտրոնի կանոնավոր օգտագործումը լավացնում է շատ առողջական խնդիրներ մարմնի այնպիսի հատվածներում, ինչպիսիք են՝ ստամոքսը, լյարդը, ինչպես նաեւ՝ ամբողջ իմունային համակարգը:

Չնայած, շատ դեպքերում մեզ թվում է, որ ցիտրուսն է ամենաօգտակարը, հաճախ մոռանում ենք, որ կիտրոնի կեղեւը նույնպես հազարավոր օգտակար հատկանիշներ է պարունակում, որոնք անհրաժեշտ են օրգանիզմին: Կիտրոնի կեղեւն ունի հզոր հակաբորբոքային ազդեցություն, որը հրաշքներ է գործում հոդացավերի դեպքում:

Հնարավոր է, որ դեռ չեք լսել այս մեթոդի մասին, այնուամենայնիվ, այն պարզ է եւ մատչելի բոլորին: Կիտրոնի կեղեւը հարուստ է եթերային յուղերով, որոնք հանգստացնող ազդեցություն ունեն արյան անոթների վրա, ինչպես նաեւ՝ կեղեւի հակաբորբոքային հատկանիշները հանգստացնում են նյարդերը:

1.Կիտրոնը կեղեւազատեք, բայց ուշադրություն դարձրեք, որ միայն դեղին հատվածը մաքրեք եւ չկպչեք սպիտակին: Ստացված կեղեւը դրեք ցավող հատվածին, ամրացրեք կպչուն ժապավենով եւ թողեք այդպես մնա 2 ժամ:

2.2 կիտրոն կեղեւազատեք եւ լցրեք ապակե տարայի մեջ: Ավելացրեք ձիթապտղի յուղ ու ծածկեք տարան: Թողեք մնա 2 շաբաթ: Ապա յուղը պատրաստ է օգտագործման: Թանզիֆը (марля) թրջեք լուծույթի մեջ եւ դրեք ցավող հոդերին: Ամրացրեք կպչուն ժապավենով եւ թողեք մնա ամբողջ գիշեր:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՊԱՐՈՒՆԱԿԻ ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՒՓԸ

Առաջին անհրաժեշտության դեղեր բոլորը պետք է ունենան տանը, որոնց հետ դեղատուփի մեջ հարկավոր է ունենալ նաեւ լրացուցիչ պարագաներ՝ ստերիլ փաթեթավորված բինտ կամ անձեռոցիկ, որը պիտանի է երկար պահպանման համար: Ոչ ստերիլ փաթեթավորման բինտը նույնպես անհրաժեշտություն է, քանի որ այն շատ հարմար է հարբուխի ժամանակ՝ որպես մեկանգամյա օգտագործման թաշկինակ, կամ էլ՝ որպես արյունահոսությունը կանգնեցնող սեղմիչ:

Առաջին բուժօգնությունը մեզ հիմնականում անհրաժեշտ է լինում վնասվածքի, այրվածքի, ուշաթափության, թունավորման, փորլուծության, մրսածության ժամանակ, ինչպես նաեւ ցավային ախտանիշների, սրտանոթային խանգարումների, բորբոքումների ընթացքում:

Doctors.am-ն առանձնացրել է առաջին անհրաժեշտության պարագաները՝

1.Ստերիլ եւ ոչ ստերիլ բամբակ

2.Սովորական եւ հականեխիչ կպչուն ժապավեն

3.Կաթոցիչ

4.Քսուքների համար նախատեսված փոքրիկ թիակներ

5.Սնդիկային ջերմաչափ

6.Ներշնչակ՝ քիթ-կոկորդային հիվանդությունների համար

7.Յոդ, որը կկիրառվի մաշկ վնասվածքների ախտահանման եւ տարբեր նպատակների համար (սրսկումից առաջացած կոշտուկների, նյարդի բորբոքման եւ այլն): Մեծ տրամաչափի եւ խորը վերքերի դեպքում, այն մշակում են յոդով՝ միայն եզրերից, որպեսզի չգրգռվի առանց այն էլ վնասված հյուսվածքը (այլընտրանք է Բետադինի լուծույթը, որով մշակում են նույնիսկ բաց վերքերը եւ սեռական օրգանները):



8.Ջմրուխտ կանաչ լուծույթ, որն օգտագործվում է վերքերի եւ ջրծաղիկի հետեւանքով առաջացած բշտիկների մշակման համար:

9.Կալիումի մանգանաթթու, որի լուծույթն օգտագործվում է թունավորման կասկածի ժամանակ, ստամոքսի եւ աղիների լվացման նպատակով: Իսկ խիտ լուծույթով մշակում են խիստ աղտոտված վերքերը:

10.Մանանեխի կպչան, ջերմակ, սառույցի պարկ, հոգնայի պիտույք, ջուր չներծծող տակաշոր, բժշկական ձեռնոցներ, զարկերակային ճնշում չափելու սարք, ֆենենդոսկոպ, միանվագ օգտագործման ներարկիչներ, պինցետ, բութ ծայրով մկրատ, ախտահանման տուփ եւ այլն:

Թվարկածը փաթեթի նվազագույն եւ մշտական պարունակությունն է, որին յուրաքանչյուր անհատ կավելացնի իրեն անհրաժեշտ դեղերը՝ մանավանդ, երբ խոսքը վերաբերում է քրոնիկ հիվանդություններով տառապող անձանց:

Արգելվում է փոքր երեխաներին բուժել մեծահասակների համար նախատեսված դեղամիջոցներով: Մանուկներին պետք է հատկացվի առանձին դեղատուփ, որի պարունակությունը պետք է ընտրվի բժշկի խորհրդով:

Միաժամանակ, անհրաժեշտ է հիշել, որ առաջին օգնությունից հետո պետք է անպայման դիմել մասնագետի օգնության:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

FACEBOOK-ՈՒՄ ԱՐԴԵՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆԵԼ ՄԵԽԱՆԻԿՈՐԵՆ


Facebook սոցիալական ցանցը մշակել է մի համակարգ, ըստ որի, հնարավոր է թարգմանել գրառումները մի շարք լեզուներով: Այժմ հնարավոր է մեխանիկական թարգմանություններ կատարել 44 լեզվով: Սա ընդլայնման միայն փորձարարական տարբերակն է եւ գործում է միայն այն օգտատերերի համար, ովքեր ցանց են մուտք գործել համակարգչից:

Այս ընդլայնմամբ, Facebook-ն առաջին անգամ օգտագործում է արհեստական ինտելեկտի վրա հիմնված գործառույթ: Facebook-ի այս ընդլայնումն ամիսներ առաջ հասանելի էր միայն էջերի համար:

Ըստ տեղեկությունների, առաջիկա օրերին Instagram-ը եւ Twitter-ը եւս կգործարկեն այս ընդլայնումը:

Գործառույթը նախատեսված է բոլոր այն օգտատերերի համար, ովքեր չգիտեն անգլերեն: Այս միջոցով կայքի ներկայացուցիչները ցանկանում են ցանցում ներառել օգտատերերի ամբողջ աշխարհից, առանց լեզվական սահմանափակումների:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդը սովոր է իրեն արդարացնել իր սեփական դատաստանի, այսինքն՝ իր խղճի առաջ՝ քավության նոխազ դարձնելով ժամանակներին, մինչդեռ ժամանակը առանձին առնված՝ զուրկ է իմաստից եւ բացատրվում է միայն մարդով:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ
(1888-1968)
Հայ անվանի դերասան

Անպտուղ է գործը տգեղ, քանզի կարճ է նրա ուղին:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Մարդուն երջանիկ կամ դժբախտ են դարձնում միայն նրա մտքերը, այլ ոչ թե արտաքին հանգամանքները: Կառավարելով իր մտքերը՝ նա կառավարում է իր երջանկությունը:

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ
(1844-1900)
Գերմանացի փիլիսոփա

Ազնիվ մարդն իր առջեւ է պահանջներ դնում, ցածր մարդը պահանջներ է ներկայացնում մյուսներին:

ԿՈՆՖՈՒՑԻՈՍ
(մ.թ.ա.551-մ.թ.ա.479)
Չինացի փիլիսոփա

Աշխարհը լավ վայր է, եւ նրա համար արժե կռիվ տալ, եւ ես չեմ ցանկանում լքել այն:

ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ
(1899-1961)
Ամերիկացի գրող, լրագրող

Մարդկանց համար աշխատանքը հաճույք է:

ՊԼԱՏՈՆ
(մ.թ.ա.427-մ.թ.ա.347)
Հին հույն փիլիսոփա

Շունը շուն է, թեեւ մարդու բարեկամն է:

ՌԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Մաթեմատիկոսի կինը ընկերուհուն ասում է.

- Ամուսինս ինձ կատարյալ է համարում:

- Հարգելի՛ս, մաթեմատիկոսի համար կատարյալը գունդն է:

☺ - Բժի՛շկ, ճի՞շտ է, որ ովքեր շատ են գազար ուտում, լավ տեսողություն ունեն:

- Իհարկե՛, մի՞թե երբեւէ հանդիպել եք ակնոցավոր ճագարի:

☺ - Մամա՛, պապայի մազերը ինչու՞ են այդքան քիչ:

- Որովհետեւ հայրիկը շատ է մտածում:

- Բա քոնը ինչո՞ւ է շատ:

- Ճաշդ կե՛ր...

☺ - Ուսուցչուհիդ իմացա՞վ, որ քեզ օգնել եմ:

- Այո, հայրի՛կ, որովհետեւ նա ասաց. «Դու մեկնակ այսքան սխալ չէիր անի»:

☺ Ադամը Եվային հարցնում է

- Սիրելի՛ս, դու ինձ սիրո՞ւմ ես:

- Բա էլ ո՞ւմ սիրեմ:

☺ - Պա՛պ, ես ե՞րբ եմ էքսան մեծանալու, որ ուր ուզեմ ու երբ ուզեմ՝ գնամ, առանց մամայիս ասելու:

- Է՛, տղա ջան, սկի ես էդքան չեմ մեծացել...

☺ Մի գեշ կին իրեն նայում է հայելու մեջ ու ասում.

- Մարդուս տեղն ա, իրան էս էլ ա շատ:

☺ Հենգամյա Վարդանիկն ամողջ օրը քաղցած մնաց, քանի որ նրա տատիկը չգիտեր, թե ինչպես է բացվում նոր եվրոլուսամուտը, որ թոռանը կանչեր ճաշելու:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ՝ 25 ՏԱՐԵԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Եռաբլուր» պանթեոն այցելեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ կաթողիկոսը, Աժ նախագահ Գալուստ Սահակյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Նրանք ծաղիկներ դրեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի, զորավար Անդրանիկի շիրիմներին եւ Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ու զինծառայողների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Հայոց բանակի օրվա առիթով Հայաստանի նախագահական նստավայրում տեղի ունեցավ պարգեւատրման արարողություն, իսկ երեկոյան նաեւ՝ տոնական համերգ:

Հայկական բանակի կազմավորման 25-րդ տարեդարձի կապակցությամբ Հայաստանի նախագահ, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության, անձնուրաց քաջության, անմնացորդ նվիրումի, ինչպես նաեւ բանակաշինության եւ զորքերի մարտական պատրաստվածության գործում ունեցած ավանդի համար, շուրջ երկու հարյուր զինծառայողների եւ ազատամարտիկների պարգեւատրեց Հայաստանի բարձրագույն պարգեւներով, շքանշաններով ու մեդալներով, շնորհեց նաեւ բարձրագույն զինվորական կոչումներ:

Հունվարի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ պատարագ:



Կատարվեց նաեւ Հանրապետական մաղթանք՝ Հայրենիքի խաղաղության եւ անսասանության համար:

ԱՌԱՆՁ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՆՀՆԱՐ Է ՈՒՆԵՆԱԼ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Առանց բարձրակարգ ուսուցիչների եւ այսօրվա պահանջներին բավարարող բովանդակության կրթական ծրագրերի, անհնար է ունենալ որակյալ կրթական համակարգ:



Այդ մասին գործադիրի այսօրվա նիստում ասաց Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը: Նրա կարծիքով, շատ դեպքերում այսօր ունենք ուսուցիչների վերապատրաստման ֆորմալ գործընթացներ, երբ բովանդակային վերապատրաստումը հաճախ փոխարինվում է ուղղակի ֆիզիկապես ներկա գտնվելով:

- Ունենք դասագրքերի որակի, բովանդակության սուր խնդիր, ինչի մասին բարձրաձայնում են թե' ծնողները, թե' ուսուցիչները,- ասաց վարչապետը:

Այդ իսկ պատճառով, Կարեն Կարապետյանը Հայաստանի կրթության եւ գիտության նախարարին հանձնարարեց մեկամսյա ժամկետում մշակել Կրթության ազգային ինստիտուտի գործունեության բարելավման ծրագիր՝ կատարելով գործառույթների եւ կառուցվածքի համապարփակ վերանայում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Եվրոպական հանձնաժողովի Հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր դիրեկտորատի գլխավոր տնօրեն Քրիստիան Դանիելսոնը:

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպման ավարտից հետո անցկացված մամլո ասուլիսում, ԱԳ նախարարը նշեց, որ Հայաստանը եւ Եվրամիությունը նոր իրավական փաստաթղթի շուրջ բանակցություններում մոտենում են եզրափակիչ փուլին:

- Եվրամիության հետ մեկնարկել ենք նոր իրավական փաստաթղթի շուրջ բանակցությունները, մինչ այսօր կայացել է բանակցությունների 9 փուլ: Հաջորդ փուլը նախատեսվում է փետրվարին: Կարծում եմ, որ մենք մոտենում ենք եզրափակիչ փուլին: Համարյա համաձայնեցված են այն դրույթների ճնշող մեծամասնությունը, որոնք ներառված են այդ փաստաթղթի մեջ թե' քաղաքական, թե' տնտեսական մասով,- ասաց նախարարը: Իր հերթին, Դանիելսոնը նշեց, որ ԵՄ-Հայաստան նոր շրջանակային պայմանագիրը մեծ ներուժ ունի զարգացնելու ԵՄ-Հայաստան հարաբերությունները:

- Արեւելյան գործընկերությունը ԵՄ-Հայաստան հարաբերություններում կարեւոր տեղ է զբաղեցնում, եւ մենք այդ հարաբերությունների հզորացման, նոր պայմանագրի վերաբերյալ վերջնական բանակցությունների ճանապարհին ենք: Պայմանագիրը վերահաստատելու է մեր ընդհանուր շահերը ոլորտների լայն շրջանակում: Այդ իսկ պատճառով, աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար, մենք Հայաստանի կառավարության հետ հստակեցնում ենք առաջնահերթությունները եւ արդեն իսկ ձեռնարկում միասնական քայլեր,- ընդգծեց նա:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂԻ ԱՐԺԵՔԸ

Հայաստանում պարենային զամբյուղի արժեքը 2016թ. չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով, տարեկան կտրվածքով, կազմել է 371 հազար 211,5 դրամ:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2015 թվականին այս ցուցանիշը կազմել է 368 հազար 906,1 դրամ, ինչը 2 հազար 305,4 դրամով պակաս է 2016 թվականի ցուցանիշից:

1 շնչի հաշվով, հացամթերքի օրական սպառման նորման 0,355 կգ է, իսկ էներգետիկան՝ 992,2 կկալ: 2016 թվականին տարեկան նորմայի արժեքը կազմել է 78 հազար 30,6 դրամ, իսկ 2015-ին 80 հազար 871 դրամ:

2016-ին մսամթերքի՝ տավարի մսի տարեկան նորմայի արժեքը կազմել է 88 հազար 487, 2015-ին՝ 88 հազար 308,1 դրամ: Կաթնամթերքինը՝ 2016թ. եղել է 80 հազար 243,3, իսկ 2015-ին՝ 82 հազար 73,8 դրամ:

2016 թվականին պարենային զամբյուղի արժեքի ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել մրգի եւ շաքարի արժեքային նորմաների բարձրացմամբ: Այսպիսով, մրգինը 2016 թվականին կազմել է 43 հազար 778,1, իսկ շաքարինը՝ 7 հազար 354,8 դրամ: Միեւնույն ժամանակ, 2015-ին այն, համապատասխանաբար, կազմել է 29 հազար 448,2 եւ 6 հազար 450,8 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԷԺԱՆԱՆՈՒՄ Է ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ

Սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագինը փետրվարի 1-ից կնվազի 1,22 դրամով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում սահմանվել էին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճարվող էլեկտրաէներգիայի հետեւյալ սակագները:

Նոր սակագների համաձայն, 110 կվ լարմամբ սնվող սպառողների համար 1 կվտ/ժ-ի համար ցերեկային սակագինը կլինի 33,48, գիշերային սակագինը՝ 29,48 դրամ, 35 կվ լարմամբ սնվող սպառողների համար 1 կվտ/ժ-ի համար ցերեկային սակագինը կկազմի 35,98, գիշերային սակագինը՝ 31,98 դրամ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 6 (10) կվ լարմամբ սնվող սպառողների համար ցերեկային սակագինը սահմանվել է 41,98, գիշերային սակագինը՝ 31,98 դրամ: Ինչ վերաբերում է 0,38 կվ եւ ցածր լարմամբ սնվող սպառողներին (բնակչության զգալի հատվածը), ապա ցերեկային սակագինը սահմանվել է 44,98 դրամ՝ նախկին 46,2-ի դիմաց, գիշերային սակագինը՝ 34,98 դրամ: Սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը կլինի 40, գիշերային սակագինը՝ 30 դրամ:

Էլեկտրաէներգիայի սակագների վերանայման գործընթացի վրա մի քանի գործոններ են ազդել: Դրանցից հիմնականը ջերմակայաններին մատակարարվող գազի սակագների նվազեցումն է:

ՆԵՐԴՐՈՒՄՍԱՅԻՆ 345 ԾՐԱԳԻՐ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը փետրվարի 1-ին աշխատանքային այց է կատարել Հայաստանի Կոտայքի մարզ՝ համայնքների ղեկավարների եւ գործարարների հետ մարզի խնդիրներն ու զարգացման հեռանկարները քննարկելու նպատակով:

Վարչապետը նշել է, որ այս շաբաթ նախարարությունները, գերատեսչությունները կսկսեն ներկայացնել ամփոփ ներդրումային ծրագրերը, եւ հաջորդ շաբաթ այն կհրապարակվի:

- Կառավարության աշխատակազմը քննարկել է 471 ներդրումային ծրագիր, որից 345-ը համարում ենք իրատեսական: Ծրագրերի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 2,4 մլրդ դոլար, որից կառավարության աշխատակազմը 2017 թվականի համար հնարավոր է համարում իրագործել 830-850 մլն դոլար արժողությամբ ծրագրեր,- հայտարարել է վարչապետը՝ ավելացնելով.- դա չի նշանակում, որ ընթացիկ տարում հնարավոր կլինի իրականացնել 830-850 մլն դոլարի բոլոր ծրագրերը, քանի որ դա կախված է փոխադարձ աշխատանքից:

- Դա այն ներուժն է, որ մենք այս պահին տեսնում ենք: 345 ծրագրի ե'ւ ֆինանսական աղբյուրն է հայտնի, ե'ւ իրագործողը: Ընդ որում, սա ամփոփ ծրագիր է, որտեղ կա ե'ւ դրամաշնորհ, ե'ւ համայնքի բյուջե, ե'ւ մասնավոր ներդրում, ե'ւ պետբյուջե, ե'ւ վարկային միջոց,- ընդգծել է Կարեն Կարապետյանը՝ հավելելով, որ, ներկա դրությամբ, կառավարությունում քննարկվում է եւս 55 ծրագիր:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2,2 ԱՆԳԱՄ ԱՎԵԼԱՑԵԼ Է ՊԼԱՆՇԵՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում, 2016 թվականի հունվար-դեկտեմբերի ընթացքում, արտադրվել է 2 հազար 12 պլանշետ: Վկայակոչելով Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալները՝ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել է 2,2 անգամ:

Հայաստանում արտադրվել է 1 հազար 683 սմարթֆոն:

Միեւնույն ժամանակ, համակարգիչների արտադրությունը նվազել է 37,7 տոկոսով եւ կազմել 1 հազար 63:

«ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԺԱՄԱՆԻ 1000 ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Կառավարությունը հավանություն տվեց սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2017թ. ծրագրին եւ միջոցառումների յանկին: Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց, որ 2016թ. ծրագրին 8 փուլով մասնակցել է 900 սփյուռքահայ երիտասարդ՝ աշխարհի 38 երկրից:

- Ծրագրով ակնկալվում է, որ 2017 թվականի ամռանը սփյուռքից հայրենիք կժամանի մինչեւ 1000 երիտասարդ,- ասաց նախարարը:

Ծրագրի նպատակն է սփյուռքի մեր հայրենակիցներին ծանոթացնել Հայաստանի կյանքին:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(3 փետրվարի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:


ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	484,00	487,00
ԵՎՐՈ	519,00	526,00
ՌՈՒԲԼԻ	8,10	8,27

Հունվարի 27-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,5 դրամով:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ



5.02.2017. Բարեկենդան Առաջավորաց Պահոց

Հատուկ է միայն Հայ եկեղեցուն: Սկսվում է Մեծ Պահքից 3 շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում, այդ օրերին թուլատրվել է միայն աղ ու հաց ուտել, արգելվել է Սուրբ պատարագ մատուցել: Առաջավորաց Պահքի խորհուրդը հեթանոսական ապականությունից մարդկային 5 զգայարանների սրբումն է: Հնում սովորույթ կար մկրտությունից առաջ 5 օր ծոմ պահել: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը նույնպես հրամայում է Տրդատ թագավորին եւ մյուսներին մկրտությունից առաջ 5 օր ծոմ պահել, որի շնորհիվ էլ Տրդատը եւ ուրիշներ փրկվում են այսահարությունից: Այդ պատճառով էլ Առաջավորաց Պահքը կոչվում է նաեւ փրկության պահք: Համաձայն Հայ եկեղեցու վարդապետների, Առաջավորաց Պահքը հաստատել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ի հիշատակ վերոհիշյալ ծոմապահության:

Առաջավորաց Պահքը թյուրիմացաբար անվանվել է նաեւ Սուրբ Սարգսի պահք, քանի որ Առաջավորաց Պահքին հաջորդող շաբաթ օրը Հայ եկեղեցին տոնում է Սուրբ Սարգսի տոնը:

10.02.2017. Հովնան մարգարեի հիշատակության օր

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Ձնատեղումներն ու մերկասառույցը որոշակի հիմնախնդիրներ են ստեղծել. Վրաստանի առանձին մայրուղիներում գործում են որոշակի սահմանափակումներ:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոճանապարհների դեպարտամենտը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար՝ անվաշղթաների կիրառումով, բացի կցորդիչով ավտոմեքենաներից: Նման սահմանափակումներ են գործում նաեւ Ախալցիխե-Նինոծմինդա, Հայաստանի սահման տանող ճանապարհին, Կոդա-Փործխիսի-Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ճանապարհի Ռադիոնովկա (Փարվանա)-Նինոծմինդա ճանապարհահատվածում:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ-2017»

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԸ» ԿԱՆՉԿԱՉՎԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի հանրային հեռուստատեսությունը, «Մանկական Եվրատեսիլի» 15-րդ մրցույթը կանցկացվի Վրաստանում, եւ հեռուստատեսությունը տասնմեկրորդ անգամ կներկայացնի եվրոպական երկրի փառատոնի ներկայացուցչին:



Նշենք, որ 2016 թվականին Վրաստանը երրորդ անգամ դարձավ «Մանկական Եվրատեսիլի» հաղթող՝ սահմանելով յուրատեսակ ռեկորդ փառատոնին մասնակցող երկրների միջեւ: Նման արդյունքի չի հասել ոչ մի երկիր: Նշենք, որ երկրի 14-րդ «Մանկական Եվրատեսիլին» հաղթեց Մարիամ Մամադաշվիլին, որից հետո Վրաստանի հեռուստատեսությունը Եվրոպայի հեռուստաընկերությունների միությունից առաջարկություն ստացավ՝ 2017 թվականին «Մանկական Եվրատեսիլը» անցկացնել Վրաստանում:

Այս կապակցությամբ, Թբիլիսիում անցկացվեց մամուլի ասուլիս, որին մասնակցեցին Վրաստանի Հանրային հեռուստատեսության ներկայացուցիչները, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Քեթեւան Բոչորիշվիլին, զբոսաշրջության ազգային վարչակազմի ղեկավար Գիորգի Չոգովաձեն եւ «Մանկական Եվրատեսիլ-2017» նախագծի ղեկավար Սերգի Գվարջալաձեն:

Ինչպես նշվեց, Վրաստանը թվով 15-րդ մրցույթը կընդունի ընթացիկ տարվա նոյեմբերին: Սերգի Գվարջալաձեի խոսքով, Վրաստանն ամեն ինչ կանի, որպեսզի համապատասխանի մրցույթի բարձր ստանդարտներին եւ ուրախացնի բոլոր այն երեխաներին, որոնք երկիր կժամանեն երաժշտական այդ տոնին մասնակցելու համար:

- Մենք կառաջարկենք բարձր որակի հեռուստաարտադրանք, որը հետաքրքիր կլինի թե' երեխաների, թե' մեծահասակների, թե' հեռուստահանդուստրիայի համար,- ասել է նա:

ՊԱՏԱՀԱՐ

ՀՐԴԵՀ՝ ԹԲԻԼԻՍԻԻ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» ԵՎ «ՈՍԿՈՒ ԲՈՐՍԱ» ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հունվարի լույս 30-ի գիշերը Թբիլիսիի կենտրոնում, կայարանամերձ հրապարակում այրվել են «Մանկական աշխարհ» առեւտրի կենտրոնի եւ ոսկյա իրերի «Ոսկու բորսա» տաղավարի շենքերը:




Վրացական ՋԼՄ-ների տվյալներով, հրշեջ 26 բրիգադ փորձում էր մարել կրակը, եւ միայն լուսաբացին է հաջողվել տեղափակել բռնկումը, սակայն բրիգադները շարունակում են աշխատել արտակարգ պատահարի վայրում:

Վրաստանի ՆԳ նախարարությունը քրեական գործ է հարուցել տեղի ունեցածի կապակցությամբ: Առավոտյան միջադեպի վայր են ժամանել տեղի վարչակազմի ներկայացուցիչները եւ Թբիլիսիի քաղաքագլուխ Դավիթ Նարմանիան:

- Ոստիկանությունն աշխատում է: Հուսով ենք՝ նրանք կպարզեն հրդեհի ծագման ստույգ պատճառները: Վնասի հատուցման մասին խոսելն առայժմ վաղ է, բայց կարելի է ասել, որ այն զերազանցում է տեղի մունիցիպալիտետի բյուջեն,- հայտարարել է շրջանային վարչակազմի ղեկավար Իրմա Ջավրադիշվիլին:

Նշենք, որ այրված շենքի հնարավոր փլուզման պատճառով իրավապահ մարմինները տեղի վաճառողներին թույլ չեն տալիս մուտք գործել շենք: Շենքից դուրս են բերվել միայն չհրկիզվող պահարաններում պահվող թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերը:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 1.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի տնօրեն ... Խաչատուրովա: 5.Վրաց հայտնի շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 8.Քրիստոնեությունը տարածած կույսերից: 10.Ոչ ճիշտ, ոչ իրավ, սխալ: 12.Հ.Շիրազի աստվածացրած հերոսը: 13.Ոչ խորդուբորդ: 14.Կանք, կաք, ...: 16.Հայոց մայր գետը: 18.Հայրենական մեծ պատերազմի հայազգի հերոս ... Սաֆարյան: 19.Նահանգ ԱՄՆ-ում: 22.Մս..., մազ..., քրջ...: 24.Հայերենի վերջածանց: 25.Աղքատ, չունեւոր: 28.Ամերիկյան դերասան ... Գարբո: 30.Հերոսուհի «Հարսնացուն հյուսիսում» ֆիլմում: 32.Ծնունդով Ախալցիխեից, հայ մեծանուն դերասան Խաչվանքյանի անունը: 34.Պատերազմի աստվածը հունական դիցաբանության մեջ: 35.Դատարկ, սին փառք ունեցող: 36.Երկրորդ նոտան: 37.Օվկիանոսային մեծ ու հզոր ալիք: 38.Նինոծմինդայի երգի-պարի համույթի ղեկավար ... Ջավախք: 40.Լվովի ավտոբուսի գործարանը: 42.Ամերիկացի, «Ֆոքս Նյուզ»-ի լրագրող ... Վոգել: 45.Քաղաք ԱՄՆ-ում՝ Նյու ...: 47.Սա չէ, այլ ...ը: 50.«... է արդեն, շատ ... է» (ժող. երգ): 52.Սլավոնական ազգ: 54.Հիվանդություն: 55.Ֆրանսիացի երգչուհի, դերասանուհի Միշել ...: 56.Ոխ, վրեժ: 58.Պատմաբան Առաքել Բաբախանյանի կեղծանունը: 59.Երկրաչափական պատկեր: 60.Ազատ Վշտունու բանաստեղծություններից: 61.Շունչ, հոգի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Մեծ Հայքի 15 նահանգներից: 3.«Հագան, կապին զենք ու ...» (Հովհ.Թումանյան. «Փարվանա»): 4.Երկնքի կապույտը: 5.Շոտլանդացի դերասան ... Գիբսոն: 6.Ողբացող քաղաք: 7.Լարային կսմիթավոր երաժշտական գործիք: 9.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի դերասանուհի, երջանկահիշատակ ... Ղարաջյան: 11.Լիճ Արեւմտյան Հայաստանում: 12.«Աղջի ..., յարիդ տարան» (ժող.երգ): 14.Արամ Թովմասյանի կեղծանունը՝ Լեռ ...: 15.... եւ կայծակ: 17.Համադասական շաղկապ: 20.Աշխարհի մեծագույն քանգարաններից մեկը Փարիզում: 21.Երգ՝ առանց նվագակցության: 23.Գինու, ջրի, թթվի տարա: 26.Չվերջացող, չսպառվող: 27.Վայրի կենդանի: 28.Հայ դասական երգի թագուհի Գոհար ...: 29.Վիրահայ դաշնակահար ... Աբովյան: 31.Գետ Չինաստանում: 33.«..., տարեք, խունջիկ-մունջիկ հարսն ու աղջիկ» («Թագավորն ու չարչին»): 39.Բույսի տեսակ: 41.Պ.Սեւակի «... զանգակատուն» ստեղծագործությունը: 43.Ամյակ, տարի: 44.Մուլտֆիլմի հերոս Վինի ...: 46.Պորտուգալացի ծովագնաց ... Դա Գամա: 48.Անգլիայի հին բնակիչների (արհամարհական) անվանումը: 49.Կուրծք: 51.Կետադրական նշան: 53.Անգլիացի բեւեռախույզ Ռոբերտ ...: 57.Անշունչ առարկա:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 7.Օգոստոս: 9.Եղունգ: 10.Շենք: 11.Ջավահիր: 13.Սատար: 16.Վառ: 17.Կոռ: 19.Մեշոկ: 22.Ցաքատ: 24.Վեներա: 25.Վագր: 27.Ֆերարի: 29.Հաստատ: 32.Նաինա: 33.Հավասի: 35.Կտակ: 38.Մեկ: 40.Բրունո: 41.Կալա: 44.Նաշ: 45.Քաջք: 48.Նեղ: 50.Դիանա: 51.Աղիք: 54.Մանր: 55.Մեն: 56.Տոտո: 58.Տիպ: 59.Դարչին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ագռավ: 2.Աստառ: 3.Կոշիկ: 4.Կեքս: 5.Կուրտ: 6.Իգոր: 8.Սերոբ: 12.Վարք: 14.Ամեն: 15.Արոր: 18.Օտար: 19.Մեթան: 20.Շերտ: 21.Կարտ: 23.Ավանակ: 26.Գինի: 28.Երամ: 29.Հին: 30.Սակր: 31.Ամանակ: 34.Վերջին: 36.Տուն: 37.Կոշ: 39.Վլե: 42.Անամպ: 43.Աղանդ: 46.Ադաք: 47.Քարտ: 49.Լիտր: 52.Քոչ: 53.Հոն: 57.Տի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445